ՀԱՂՈՒՐԴՈՒՄՆԵՐ

Տ. ՄԱՄԲՐԵ ԱԲԵՂԱ ՏԱՇՉՅԱՆ

ՕԼԱՎԵՐԴ ԳՅՈՒՂԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Այն, ինչի մասին ուզում եմ տեղյակ պահել ընթերցողին, մի փոքրիկ, բայց շատ հայեցի գյուղ է՝ իր պաշտամունքով, ամբողջությամբ քրիստոնյա հավատքով, օրինապաշտ մարդկանցով, որոնք, ինչպես ամեն մի հայ, ունեցել են իրենց դառն ճակատագիրը, բայց մնացել են անկոտրում եւ ապրվածապաշտ: Դրա վկայությունն են գյուղում պահպանվող հին Ավետարանները, որոնք բերվել են Էրզրումից (Կարին) գաղթելիս: Դրանցից մեկը գտնվում է իմ հայրենի տանը, եւ գյուղացիները այն դարձրել են ուխտատեղի՝ տալով «Մարկոսենց Ավեռան» անունը:

Օլավերդ. բնակչությունը ներգաղթել է այս գյուղը, որ փռված է Աբուլ լեռան փեշին Ս. Խաչատուրի հովանու ներքո, Կարինի գավառի Երկան Մասուր գյուղից 1830 թ. Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու առաջնորդությամբ: Ժամանակի ընթացքում գյուղը համալրվում է նոր գաղթականներով, բնակչության ավելացմամբ պայմանավորված անհրաժեշտություն է դառնում հայ մարդուն բնորոշ գոյատեւման հոգեւոր խորհուրդներից ամենակարեւորի՝ եկեղեցու կառուցումը: Անշուշտ այդ հարցում իր ամենահաս զորակցությունն է ցուցաբերում իր հազարավոր հոտը Էրզրումի նահանգից առաջնորդած Կարապետ Բագրատունի սրբազանը, որ վայելում էր ժողովրդի խոր հարգանքը: Եկեղեցու կառուցման նախաձեռնողը եղել է Տերտերանց տերտերը՝ Եղիշե Տեր-Գրիգորյանը: Սկզբից կառուցվել է մատուռ, որտեղ գյուղացիները վառել են մոմեր եւ մատաղ կտրել: Թե մատուռը ո՛ր թվականին է կառուցվել, ստույգ հայտնի չէ: Հետագայում մատուռի տեղում կառուցվել է եկեղեցի, որի դիմահայաց պատի սրբատաշ քարի վրա արված հայատառ արձանագրությունից իմանում ենք վերանորոգման տարեթիվը՝ 1899: Մատուռը կառուցվել է Օլավերդում գաղթականների հիմնավորվելուց անմիջապես հետո: Մատուռի փոխարեն հետագայում վեր խոյացած այսօրվա Ս. Աստվածածին եկեղեցին ունի իր զանգակատունը: Եկեղեցին երկար տարիներ ծառայում է իր ժողովրդին, խորհրդային կարգերի հաստատումից հետո գործում է մինչեւ չարաբաստիկ 1937 թ.: Ինչպես հայկական եկեղեցիների մեծ մասը, սա նույնպես վերածվում է պահեստի, որտեղ պահվում է Աստծո տված ամենամեծ սրբություններից մեկը՝ հացահատիկը:



Չնայած այս ամենին՝ հավատացյալ ժողովուրդն իր մոմն ու խունկը վառում էր դռնփակ եկեղեցու պատերի տակ: Պետք է հիշեցնեմ, որ եկեղեցու կառուցման ժամանակ հիմքերը փորելիս գտնվել էր քանդակած խաչքար եւ խոյի արձան, որոնք այժմ եկեղեցու պատի հետ կանգնած են եւ այն տարիներին փոխարինել են եկեղեցուն: Մոմերը վառվել են այդ սրբությունների մոտ: Փակ վիճակում շուրջ կես հարյուրամյակ Ս. Աստվածածին եկեղեցին ծառայում էր թաղման արարողություններ կատարելիս. գյուղի երիտասարդներից մեկը բարձրանում էր վեր եւ զանգակատնից երեք անգամ հնչեցնում լռած զանգը: Յոթանասուն տարվա համբերատար լռությունից հետո վերջապես բացվեցին Ս. Աստվածածին եկեղեցու կաղնեփայտից պատրաստված նախշազարդ դռները: Խցերում դեռեւս մնում էին ցորենի եւ գարու մգլած մնացորդները եւ, ա՛յ քեզ հրաշք, ցորենի եւ գարու մնացորդների տակից դուրս են գալիս երկու սրբապատկերներ (իկոնա)՝ Պողոս եւ Պետրոս առաքյալների լուսապսակ պատկերներով: Սրբապատկերները բավական լավ պահպանված էին եւ այսօր զարդարում են Ս. Աստվածածնի խորանները: Եկեղեցին հարուստ է եղել եկեղեցական գրքերով եւ սրբապատկերներով, որոնք ոչնչացվել, վառվել են վայ կոմունիստների ձեռքով: Աստծո Տունը նորից բացվում է հավատացյալների առաջ: Այն մարդաշատ է դառնում հատկապես կրոնական-եկեղեցական տոների օրերին:

Հարուստ է Ջավախք աշխարհը եկեղեցիներով եւ մատուռներով, որոնք սպասում են իրենց ուսումնասիրողներին: Որոշ գյուղերում եկեղեցիները յուրացնելու փորձեր են արվել, սակայն դրանք հանդիպել են գյուղացիների դիմադրությանը եւ պահպանում են իրենց հայեցի կերպարը առ այսօր: Թող Աստված զորավիգ լինի՝ պաշտպանելու մեր սրբություն սրբոց ուխտատեղիները: